«ՍԵՎԱՆԻ Խ. ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՈՒ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՊԱՏՎԻ ՈՒ ԱՐԺԱՆԱՊԱՏՎՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԱՌԱՐԿԱՅԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԵՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ

ՀԵՂԻՆԱԿ՝ ԴԵՐԵՆԻԿ ԲԱԲԱՅԱՆ

ԽՈՒՄԲ/ԱՌԱՐԿԱ/ ՝ III, ԿԵՆՍԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ՍԵՎԱՆ 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. **Ներածություն ……..…… 3**
2. **Իրավունք, արժանապատվություն, պատիվ հասկացությունները, դպրոցում դրանց դրսևորումները …….. 4-6**
3. **Հետազոտական աշխատանք …… 7-11**
4. **Եզրակացություն …… 12-14**
5. **Օգտագործված գրականության ցանկ …….. 15**

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Առանց խտրականության բոլոր երեխաներն օժտված են նույն իրավունքներով: Իրավունքի կարևոր մասերից է կրթության հավասար պայմանների ստեղծումը , որը հռչակում է որպես յուրաքանչյուր երեխայի կրթության իրավունքի ապահովման երաշխիք: Սովորողների իրավունքների, պարտականությունների արժանապատվության պաշտպանումը նշանակում է, որ դպրոցը կարողանում է որակյալ կրթություն ապահովել բոլոր երեխաների համար, անկախ նրանց տարատեսակ կարողություններից: Նման մոտեցումը հնարավորություն է տալիս լիարժեք կերպով զարգացնել երեխաների անհատական կարողությունները, ապահովել նրանց սոցիալականացումը հասարակական կյանքի բոլոր ոլորտներում: Այն ենթադրում է համակարգի, այլ ոչ թե երեխայի հարմարեցում: Պարզապես երեխաներին անհրաժեշտ է հասկանալի:

Արժանապատվությունը մարդու իրավունքների հիմնարար հասկացություն է, բարձրագույն և առանցքային արժեք, մարդու անօտարելի իրավունք, որը հատուկ է նրան ծնված օրից: Անձի արժանապատվությունը այն հիմքն է, որի վրա կառուցված է մարդու իրավունքների համակարգը: Արժանապատվությունը սկզբունք է, որը պաշտպանվում է որպես իրավունք՝ առանձին և այլ իրավունքների համատեքստում:

Շատ կարևոր է դասավանդման ընթացքում սովորողների մեջ սերմանել պատիվ և արժանապատվություն, իրավունք և ազատություն:

Հետազոտության նպատակն է ուսումնասիրել սովորողի իրավունքների և ազատությունների, պատվի և արժանապատվության պաշտպանությունը առարկայի դասավանդման ընթացքում: Հետազոտության խնդիրներն են՝ ուսումնասիրել արժանապատվություն, պատիվ, հասկացությունները, վերլուծել սովորողների իրավունքների, արժանապատվության պաշտպանությունը առարկայի դասավանդման ընթացքում: Իրականացնել արդյունքների ամփոփում և վերլուծություն:

Իրավունք, արժանապատվություն, պատիվ հասկացությունները, դպրոցում դրանց դրսևորումները

Ներկայիս փոփոխությունները/ ներառական կրթական համակարգ/ խիստ արժեքավոր են քանի, որ տալիս են հավասար իրավունք և հնարավորություն բոլորին: Ներառական կրթություն ասելով հասկանում ենք կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող, զարգացման առանձնահատկություններին համապատասխան, անհրաժեշտ պայմանների և հարմարեցված միջավայրի ապահովման միջոցով կրթական գործընթացին առավելագույն մասնակցության և հանրակրթության պետական չափորոշչով սահմանված արդյունքի ապահովում:

Նման մոտեցումը կարող է ապահովել բոլոր սովորողների կրթական կարիքները: Դպրոցը պետք է կարողանա որակյալ կրթությյան ապահովել բոլոր երեխաների համար, անկախ նրանց տարատեսակ կարողություններից: Բոլորը պետք է հարգալից վերաբերմունքի արժանանան և ստանան համատեղ սովորելու համար հավասար հնարավորություններ:

Դպրոցը և ուսուցչամանկավարժական անձնակազմը պատասխանատվություն են կրում ստեղծելու այնպիսի միջավայր, որը միտված կլինի զարգացնելու յուրաքանչյուր աշակերտի ներուժը և կարողությունները: Ուսուցումը պետք է խթանի և ոչ թե խոչընդոտի երեխայի զարգացումը: Ճիշտ կրթական ծրագիրը բացառում է ամեն տեսակ խտրականություններ երեխաների նկատմամբ, ապահովում է հավասար վերաբերմունք բոլոր մարդկանց հանդեպ: Նման մոտեցումը ձգտում է հասնել ուսուցման նկատմամբ առավել ճկուն մոտեցման՝ բավարարելու մարդկանց զանազան կրթական պահանջները: Եթե իրավունքների, ազատությունների մասին կրթության մտցրած փոփոխությունները ուսուցումն ավելի արդյունավետ դարձնեն, ապա կշահեն բոլոր երեխաները: Այսպիսով, սովորողի խնդիրների և դժվարությունների մեծ մասը լուծելի է հանրակրթական դպրոցում՝ անհրաժեշտ նախապայմաններ ապահովելու դեպքում:

Անհրաժեշտ է հաղթահարել ուսուցիչների մոտ առաջացած տագնապը այն հարցերի շուրջ, որ իրենք ի վիճակի չեն լուծելու կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող աշակերտների խնդիրները: Մանկավարժները կարող են օգնել կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող աշակերտներին բազմաթիվ հարցերում, սակայն միայնակ չեն կարող հաղթահարել

աշակերտի բոլոր խնդիրները:

Դպրոցում երեխաներին միմյանցից առանձնացնելու օրինական հիմքեր չկան, ուստի բոլորը հավասար մոտեցումներով պետք է սովորեն միասին. դա օգտակար կլինի բոլորիս համար: Պետք չէ նրանց պաշտպանել միմյանցից: Բոլոր երեխաներին պետք է կրթություն, որը կօգնի նրանց հարաբերություններ հաստատել և պատրաստվել կյանքին հասարակության մեջ: Միայն հավասար մոտեցումը կարող է նվազեցնել վախը և նպաստել բարեկամության, հարգանքի ու փոխըմբռնման հաստատման: Կրթությունը պետք է համարվի ցանկացած անձի մարդկային ու ֆունկցիոնալ զարգացմանը նպաստող միջոց՝ անկախ ֆիզիկական կամ այլ խոչընդոտներից: Նման մոտեցումը օգնում է հաղթահարելու խտրականությունը, նպաստում է աղքատության պատճառով առաջացող օտարման կամ բացառման երևույթների վերացմանը, բարձրացնում է կրթության որակը:

Դասապրոցեսի ընթացքում հավասար պայմանների և մոտեցման ստեղծումը օգնում է երեխաների անհատական կարողությունների, նրանց սոցիալականացումը հասարակական կյանքի բոլոր ոլորտներին և, ի վերջո, իրենց ուժերի սահմաններում հետագայում բարձրացնում են սեփական կենսամակարդակը: Կարևոր խնդիր է նաև ծնողների ներգրավվածությունը, երեխաների զարգացման և դաստիարակության գործընթացին:

Աշխատանքները կարելի է կազմակերպել հետևյալ սկզբունքով.

- Բորոր երեխաները խմբի լիարժեք անդամներ են, ունեն միևնույն իրավունքները,
- Խմբում ստեղծել հանդուրժողականության մթնոլորտ:
- Խորհուրդ տալ ուսուցչին երբեմն անտեսել երեխայի վատ վարքագիծը, որը նպատակ ունի իր վրա ուշադրություն սևեռել: Եթե երեխան իրեն ճիշտ է պահում՝ չխնայել խրախուսանքը, գովեստը:
- Օգնել ուսուցիչներին ոչ միայն բացահայտելու աշակերտի թույլ և ուժեղ կողմերը, այլև դասը կազմակերպել՝ հենվելով ուժեղ կողմերի վրա:

Այսպիսով, Ներկայիս կրթական քաղաքականությունը նպատակաուղղված է յուրաքանչյուր երեխայի կրթության մատչելիության, հավասար մասնակցության հնարավորության և որակի ապահովմանը: Որակյալ կրթության էությունը յուրաքանչյուր երեխայի կարիքների գնահատումն է և կրթության գործընթացում երեխայի ակտիվ մասնակցության խրախուսումը: Բոլոր երեխաների իրավունքն է ստանալ լիարժեք կրթություն առանց խտրական վերաբերմունքի,

արժանապատվության ոտնահարման: Ներառական կրթությունը լիարժեք ապահովում է սահմանափակ հնարավորություններով սովորողների իրավունքները և արժանապատվությունը :

Շատ կարևոր է դասավանդման ընթացքում սովորողների մեջ սերմանել պատիվ և արժանապատվություն, իրավունք և ազատություն: Մարդու իրավունքների հիմնարար սկզբունք լինելուց զատ՝ արժանապատվությունը նաև բարոյագիտական հասկացություն է: Անձի արժանապատվությունը մյուս մարդկանցից պահանջում է հարգել անհատին, ճանաչել նրա համապատասխան իրավունքներն ու հնարավորությունները: Արժանապատվությունն է սովորողների մեջ ծնում պատասխանատվության զգացումը: Էթիկայում ազատությունը կապված է մարդու մոտ կյանքի ազատության առկայության հետ: Ազատություն ասելիս հասկանում ենք մարդու անհատականության անարգել, բազմակողմանի ուսումնասիրությունն ու բացահայտումը, այն դիտարկվում է որպես մարդու բարոյաստեղծագործական բնույթի բացահայտում: Արժանապատվությունը այն հիմքն է, որը ընկած է մարդու իրավունքների հիմքում: Այն նաև փիլիսոփայական և բարոյագիտական հասկացություն է: Արժանապատվությունը ընկալվում է որպես մարդու հատուկ բարոյական վերաբերմունքը և հասարակության վերաբերմունքը իր հանդեպ, որտեղ ընդունվում է անձնավորության արժեքը: Երեխան իրավունք ունի ազատորեն արտահայտելու իր կարծիքը, այդ իրավունքը ներառում է ցանկացած բնույթի տեղեկատվություն և գաղափարներ որոնելու, ստանալու և հաղորդելու ազատությունը՝ անկախ սահմաններից, գրավոր կամ տպագիր ձևով, ստեղծագործության տեսքով կամ այլ միջոցներով՝ երեխայի ընտրությամբ:

Հետազոտական աշխատանք

«Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիան ամփոփ ամբողջական եղանակով ներկայացնում է երեխայի իրավունքները: Կոնվենցիան կազմված 4 հիմնարար սկզբունքներից(հոդվածներից) որոնք նպատակաուղղված են ապահովելու երեխաների իրավունքների լիակատար և արդյունավետ կիրառումը: Երեխաների համար հավասար հնարավորությունների ապահովումն ու նրանց իրավունքների պաշտպանությունը կախված է նրանից, թե ինչպես են ապահովվում Կոնվենցիայի այդ չորս հիմնաքարային սկզբունքները: Սկզբունքների հիմքում ընկած հիմնական գաղափարն այն է, որ երեխաներն անհատներ են: Երեխաներին հավասար հնարավորություններ տրամադրելու պարտավորությունը սահմանվում է «Երեխայի իրավունքների մասին» կոնվենցիայի 2-րդ հոդվածում.

Բոլոր չափահաս անձինք պետք է անեն այն, ինչը լավագույնն է երեխայի համար, որոշումներն ընդունելիս նրանք պետք է մտածեն, թե իրենց որոշումներն ինչպես կազդեն երեխայի վրա: Երեխայի շահերը բոլոր դեպքերում գերակա են մեծահասակների նկատմամբ: Գաղտնիք չէ, որ ինչքան վաղ է սկսվում երեխայի հետ աշխատանքը, այնքան լիարժեքորեն է նա կարողանում օգտագործել իր ներուժը: Նրանք դառնում են ավելի հանդուրժող, զգայուն՝ դիմացինի կարիքների նկատմամբ, գթասիրտ, միջանձնային հարաբերություններում՝ առավել ճկուն: Կոնվենցիան նաև կոչ է անում պետություններին օժանդակելու այն ընտանիքներին, որոնք չունեն իրենց երեխաների համար կյանքի արժանապատիվ մակարդակ ապահովելու հնարավորություն: Երբ ցանկանում ենք հանգստանալ, խաղալ, կրթություն ստանալ, ապրել համերաշխ ընտանիքում, դրանք էլ մեր իրավունքներն են:

Շատ կարևոր է երեխաներին իրազեկել Հանրակրթության մասին ՀՀ օրենքով իրեն վերապահված իրավունքներն ու պարտականությունները: Յուրաքանչյուր պետություն իր և իր ժողովրդի համար մշակում է օրենքներ, որոնք կծառայեն ողջ հասարակությանը և հասարակության յուրաքանչյուր անդամին: Օրենքները կարգավորում են մեր կյանքը և ծառայում են մեզ: Այդ պատճառով էլ դրանք պարտադիր են բոլորի համար: Մենք էլ մեր հերթին պետք է լավ իմանանք օրենքները և հետևենք դրանց: Ոչ ոք չի կարող օրենքից բարձր լինել: Մեզանից

յուրաքանչյուրն ունի իրավունքներ: Դրանք մեզ ոչ ոք չի նվիրել և ոչ ոք չի կարող մեզանից խլել:

Սովորողի, ուսուցչի իրավունքներն ու պարտականություններն են

Սովորողն իրավունք ունի՝

ա) ստանալու հանրակրթության պետական կրթական չափորոշչին համապատասխան կրթություն.

բ) ծնողի համաձայնությամբ ընտրելու ուսումնական հաստատությունը և ուսուցման ձևը, ինչպես նաև տվյալ ուսումնական հաստատությունում առկա հոսքը, ստանալու կրթական վճարովի ծառայություններ.

գ) անվճար օգտվելու ուսումնական հաստատության ուսումնանյութական բազայից.

դ) մասնակցելու ներդպրոցական և արտադպրոցական միջոցառումների. ե) պաշտպանված լինելու ցանկացած ֆիզիկական և հոգեբանական ճնշումներից, շահագործումից, մանկավարժական և այլ աշխատողների ու սովորողների այնպիսի գործողություններից կամ անգործությունից, որով խախտվում են սովորողի իրավունքները, կամ ոտնձգություն է արվում նրա պատվին ու արժանապատվությանը.

զ) ուսումնական հաստատության կանոնադրությամբ սահմանված կարգով մասնակցելու ուսումնական հաստատության կառավարմանը.

է) ազատորեն փնտրելու և մատչելիորեն ստանալու ցանկացած տեղեկատվություն, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի.

ը) ազատ արտահայտելու սեփական կարծիքն ու համոզմունքները.

թ) օգտվելու օրենքով և ուսումնական հաստատության կանոնադրությամբ սահմանված այլ իրավունքներից:

Սովորողը պարտավոր է՝

ա) Կանոնավոր հաճախել ուսումնական պարապմունքներին, անհարգելի պատճառով չուշանալ, չբացակայել դասերից.

բ) Սովորել բարեխղճորեն, պահպանել մայրենի լեզվի մաքրությունն ու անաղարտությունը

գ) Խնամքով վերաբերվել դպրոցի շենքին, գույքին և ունեցվածքին, ծառերին ու թփերին.

դ) Հարգել դպրոցի սովորողների և աշակերտների իրավունքներն ու արժանապատվությունը.

ե) Օգնել փոքրերին, հոգատար լինել նրանց նկատմամբ, հարգալից լինել ծնողների, մեծերի, կանանց և աղջիկների նկատմամբ.

զ) Խնամքով վերաբերվել շրջակա միջավայրին, բնությանը, մասնակցել բնության պահպանման աշխատանքներին, շաբաթօրյակներին.

է) Իմանալ և պահպանել անվտանգության տեխնիկայի, հակահրդեհային, ճանապարհային երթևեկության կանոնները, կարողանալ պաշտպանվել տարերային աղետից.

ը) Ամենուր պահպանել մաքրություն, անձնական հիգենայի կանոններ, չծխել, չօգտագործել ոգելից խմիչքներ և թմրանյութեր.

Կրթություն ստանալը մեր իրավունքն է, բայց այն միաժամանակ նաև մեր պարտականությունն է: Մենք պարտավոր ենք ամեն օր գնալ դպրոց, սովորել մեր դասերը, պահպանել դպրոցի ընդունած կանոնները:

Մանկավարժական աշխատողը պարտավոր է՝

ա) հարգել և պաշտպանել սովորողի իրավունքներն ու ազատությունները, պատիվն ու արժանապատվությունը.

բ) նպաստել երեխայի կրթության իրավունքի իրացմանը՝ հաշվի առնելով յուրաքանչյուրի կրթական կարիքների առանձնահատկությունները:

Այսպիսով՝ մենք ունենք տարբեր պարտականություններ, բայց դրանցից ամենակարևորը ուրիշի իրավունքները հարգելու պարտականությունն է: Օրինակ՝ մենք ոչ միայն իրավունք ունենք հարգալից վերաբերմունքի, այլև պարտավոր ենք հարգել ուրիշներին: Օրենքները չիմանալը չի ազատում պատասխանատվությունից, ուստի անհրաժեշտ է աշակերտներին դեռ մանկուց իրազեկել հասարակական կարգ ու կանոնի, օրենքի, իրավունքի ու պարտականության, հավասարության և արդարության կարևորության մասին:

Հետազոտության մեթոդները՝ զրույց-քննարկում, դիտարկում, համեմատում: Ի վերուստ երեխաներն օժտված են իրավունքներով, մեծահասակները և պետությունը պարտավոր են պաշտպանել այդ իրավունքները: Հետազոտության նպատակն է ուսումնասիրել սովորողի իրավունքների և ազատությունների, պատվի և արժանապատվության պաշտպանությունը կենսաբանություն առարկայի դասավանդման ընթացքում: Մասնավորապես առարկան նպատակ ունի հիմքեր դնել և սովորողներին օգնել՝

- հասկանալ սեփական ինքնությունը որպես անձ և անհատականություն,
- ընդունել մարդուն որպես բարձրագույն արժեք, ընդունել իր հասակակիցներին՝ հարգելով նրանց առանձնահատկությունները, միմյանց նկատմամբ դրսևորել հարգալից և ոչ խտրական վարքագիծ,
- Ճանաչել բնությունը, որպես կենսաբանական բարձրագույն արժեք
- արդյունավետ հաղորդակցվել, հասկանալ, քննադատաբար վերլուծել տարբեր տեսակետներ, արտահայտել սեփական կարծիքը, բնության և բնապահպանական խնդիրների նկատմամբ
- Իմանալ կենդանիների խնդիրները և պաշտպանել, ուսումնասիրել վերացող տեսակները և լինել սրտացավ:
- հաղթահարել կոնֆլիկտային իրավիճակները, բանակցել և նախընտրել խաղաղ տարբերակներ, կարողանալ զերծ մնալ բռնությունից և բռնություն կիրառելուց:

Առարկայի նպատակն է աշակերտների մոտ սերմանել կենսաբանություն առարկայի նկատմամբ սեր և հետաքրքրություն, հարցեր ձևավորելու և այդ հարցերի պատասխանը քննելու, գտնելու և վերլուծելուծական մտածողությունը զարգացնելը: Դա մարդու կյանքում սոցիալական ինքնագիտակցության աճի ժամանակաշրջանն է, և անհրաժեշտ է, որ յուրաքանչյուրի մոտ ձևավորվի արդարացի վերաբերմունք շրջապատի մարդկանց և բնության նկատմամբ: Երեխայի համար շատ կարևոր է հենց այդ տարիքում ընդունված լինել կոլեկտիվի կողմից, լինել նրա լիիրավ անդամը:

'Իրավունք և պարտականություն' օգնում է երեխաներին գիտակցել իրենց արարքների հետևանքները, ինչից էլ ծնվում է էթիկայի և բարոյականության գաղափարները: Առարկայի ուսումնասիրությունը նպաստում է սովորողների, բնության՝ բուսական և կենդանական աշխարհի իրավունքների և պաշտպանությունը: Պահպանել դպրոցական համակեցության կանոնները, բերել մեծահասակների և հասակակիցների վարքագծի դրական և բացասական ազդեցության օրինակներ, հստակ արտահայտել ցանկություններն ու կամքը, ոչինչ թույլ չտալ առանց իր ցանկության, երբ դա կարող է վնասել իրեն: Նկարագրել և բերել իրենց առնչվող պարզ օրինակներ ազատության, արդարության և հավասարության, պատասխանատվության և հանդուրժողականության վերաբերյալ: '' Կենսաբանություն'' առարկան կոչված է օգնելու երեխային՝ ճանաչել իրեն ոչ միայն որպես անհատ, այլև որպես հասարակության և բնության մասնիկ: Շփվելով տարբեր մարդկանց հետ՝ նրանք սովորում են օրինակելի վարքագիծ դրսևորել հասարակական վայրերում և ձեռք են բերում հաղորդակցման հմտություններ: Առարկայի ուսումնասիրության ընթացքում աշակերտները հնարավորություն են ունենում գիտակցել շրջակա միջավայրի նկատմամբ հարգանքի կարևորությունը՝ մաքուր պահել շրջակա միջավայրը, խնամել կենդանիներին, ուշադիր լինել բուսականության նկատմամբ:

Հավասար պայմաններ ստեղծելիս հաշվի է առնվում յուրաքանչյուր երեխայի հետաքրքրությունները: Ամբողջ տարվա ընթացքում փաստերով և օրինակներով աշխատանք է տարվել այդ գաղափարները զարգացնելու ուղղությամբ, ինչպես նաև հիմք է դրվել հետագա գործողությունների ու գաղափարների զարգացման համար: Այս ամենից հետո նրանք բացատրում էին, թե ինչպես կարող է վարքագիծը ազդել ընկերական հարաբերությունների վրա և ինչ կարող է լինել կանոններին չհետևելու դեպքում: Բերվել են օրինակներ պարտականությունների մասին: Օրինակ՝ դասերին չխոսել և ուշադիր լինել, սենյակային բույսերը խնամել և չվնասել, աղբը գցել աղբամանը և այլն: Երեխաները մասնակցում են այն միջոցառումների որոնք կօգնեն կանխելու երեխաների նկատմամբ խտրականությունը:

Եզրակացություն

Երեխան դպրոց հաճախելու առաջին իսկ օրվանից պետք է իմանա իր իրավունքներն ու պարտականությունները, ինչպես նաև իր ազատությունների ու պատվի, արժանապատվության պաշտպանությունը: Այդ գործում շատ մեծ դեր ունի ուսուցիչը: Ուսուցչի հետևողական աշխատանքի և խիստ ուշադրության արդյունքում սովորողը կհասկանա և կկարողանա իր տարիքին համապատասխան հստակ պատկերացնել իր իրավունքներն ու պարտականությունները: Մենք պետք է միշտ հիշենք, որ մեր արարքները ոչ միայն մենք ենք գնահատում, այլ նաև ուրիշները: Մեր կատարած քայլերը տարբեր հետևանքներ կարող են ունենալ ոչ միայն մեր, այլև շրջակա միջավայրի համար: Երբեմն մեր որոշ արարքներ կարող են և վտանգավոր լինել: Դպրոցն ու դասարանն այն վայրն է, որտեղ աշակերտն իրեն պետք է ապահով և լավ զգա: Մենք չպետք է մոռանանք, որ ամեն արարք իր արձագանքն ունի: Որևէ բան անելուց առաջ պետք է միշտ մտածենք, թե ինչ հետևանքներ այն կունենա: Երբեք թույլ չտանք մեզ կամ ուրիշներին վնասող արարք, ով էլ որ մեզ դրան դրդի: Յուրաքանչյուրս ունենք մեր ուժեղ և թույլ կողմերը՝ ինչ-որ բան ավելի լավ ենք կարողանում անել, մի այլ բան էլ դժվարությամբ ենք կարողանում անել կամ ընդհանրապես չենք կարողանում: Պետք է հիշենք նաև, որ մեր իրավունքներն ու պարտականությունները փոխկապակցված են:

Այսպիսով, մանրամասնորեն ուսումնասիրելով սովորողի իրավունքները և ազատությունները, պատվի և արժանապատվության պաշտպանությունը \կենսաբանություն\ առարկայի դասավանդման ընթացքում եկանք այն եզրակացությանը, որ սկսած 1-ին դասից առարկայի դասավանդման ընթացքում պարտադիր է սովորողների իրավունքների և ազատությունների, պատվի և արժանապատվության պաշտպանությունը, քանի որ մարդը համարվում է բարձրագույն արժեք: Հետազոտության արդյունքների վերլուծությունը ցույց տվեց, որ դասավանդման գործընթացի նպատակային կազմակերպումը հանգեցնում է սովորողների իրավունքների և ազատությունների, պատվի ու արժանապատվության պաշտպանության բարձրացմանը: Արժանապատվությունը մարդու իրավունքների հիմնարար հասկացություն է, բարձրագույն և առանցքային արժեք, մարդու անօտարելի իրավունք, որը հատուկ է նրան ծնված օրից: Անձի արժանապատվությունը այն հիմքն է, որի վրա կառուցված է մարդու իրավունքների

համակարգը: Արժանապատվությունը սկզբունք է, որը պաշտպանվում է որպես իրավունք՝ առանձին և այլ իրավունքների համատեքստում:

Շատ կարևոր է դասավանդման ընթացքում սովորողների մեջ սերմանել պատիվ և արժանապատվություն, իրավունք և ազատություն:

Արժանապատվությունը մարդու իրավունքների հիմնարար հասկացություն է, բարձրագույն և առանցքային արժեք, մարդու անօտարելի իրավունք, որը հատուկ է նրան ծնված օրից: Անձի արժանապատվությունը այն հիմքն է, որի վրա կառուցված է մարդու իրավունքների համակարգը: Սովորողների իրավունքների, պարտականությունների արժանապատվության պաշտպանումը նշանակում է, որ դպրոցը կարողանում է որակյալ կրթություն ապահովել բոլոր երեխաների համար, անկախ նրանց տարատեսակ կարողություններից: Արժանապատվությունը սկզբունք է, որը պաշտպանվում է որպես իրավունք՝ առանձին և այլ իրավունքների համատեքստում: Շատ կարևոր է դասավանդման ընթացքում սովորողների մեջ սերմանել պատիվ և արժանապատվություն, իրավունք և ազատություն:

Արդյունավետ ուսուցումն առանց սովորողի իրավունքների ու ազատությունների, պատվի ու արժանապատվության պաշտպանության, ինչպես նաև պարտականությունների կատարման անհնար է: Դասապրոցեսում պետք է ստեղծվեն այնպիսի պայմաններ, որ սովորողը հաճույքով հաճախի դպրոց և, որ ամենակարևորն է, զգա, որ իր իրավունքները, պատիվն ու արժանապատվությունը պաշտպանված է: Այդժամ նա լիարժեք կկատարի իր պարտականությունները: Բնականաբար այդ ամենին հետևողն ու հիմնական նպաստողը ուսուցիչն է: Այսպիսի դասընթացները պահանջում են ավելի մեծ պատրաստվածություն: Ուսուցիչը պետք է անընդհատ դրական հուզական մթնոլորտ ստեղծի դասաժամին, իսկ դրա համար անհրաժեշտ է ամրապնդել սովորողի վստահությունը իր անձի նկատմամբ: Այս ամենին հնարավոր է հասնել ուսուցչի և սովորողի համագործակցության և փոխադարձ հարգանքի շնորհիվ:

Դասապրոցեսի ընթացքում մանկավարժների հիմնական մոտեցումը պետք է բխի այն գաղափարից, որ յուրաքանչյուր աշակերտ կարող է սովորել և ստեղծագործել, անկախ ունեցած ֆիզիկական, մտավոր հնարավորություններից, և/կամ ռասսայական, կրոնական պատկանելիությունից: Միևնույն ժամանակ, նոր կրթական մոտեցումները /ներառական կրթություն/ չի կարող զարգանալ հանրակրթության համակարգից դուրս: Մանկավարժական ճիշտ մոտեցումը

նպաստում է հասարակության բոլոր անդամների հնարավորությունների հավասարեցմանը՝ հաստատելով նոր հարաբերություններ և ստեղծագործական հնարավորություններ, որոնք անցյալում անհնար էին՝ խտրական վերաբերմունք, արմատացած բուլլինգ, արժանապատվության ոտնահարում: Այսպիսով ճիշտ մոտեցումը ընդունում և հարգում է երեխաների տարբերությունները՝ տարիքը, սեռը, ծագումը, լեզուն, զարգացման առանձնահատկությունները, անհատական առանձնահատկությունները, ընտանիքի սոցիալական կարգավիճակը և այլն, և չի ենթարկում արժանապատվության ոտնահարման կամ նվաստացման: Ուստի, սովորողի խնդիրների և դժվարությունների մեծ մասը լուծելի է հանրակրթական դպրոցում՝ անհրաժեշտ նախապայմաններ ապահովելու դեպքում:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. **Եկեք սովորենք երեխայի իրավունքները**
2. **/ՄԱԿ/-ի կոնվենցիա**
3. **ՀՀ օրենսգիրք**
4. **Համացանց**